

 **Համո Մոսկոֆյան, Բեյրութ, 4 Դեկտեմբեր 2015**

Անցած տարի, Սիրիա և Լիբանան կատարած այցի օրերին, Հ.Հ. Ազգային Ժողովի պատգամաւորները հանդիպումներ ունեցան երկու երկրների ղեկավար անձանց, հայ կուսակցութիւնների և կազմակերպութիւնների առաջորդների, Լաթաքիա և այլ վայրեր ապաստանած քեսաբցիների հետ՝ առաջարկելով Մայր Հայրենիքի օգնութիւնը: Շնորհակալութեամբ ընդունելով ներգաղթի ու մարդասիրական օգնութեան հրաւերներն ու քայլերը, «աւանդական» կուսակցութիւնների ներկայացուցիչները զգուշացրեցին ռազմական միջամտութեամբ Քեսաբը ազատագրելու փորձերը, վախենալով թէ կարող են ինքնասպանական գործողութիւններ տեղի ունենան Մերձաւոր Արևելքի հայկական համայնքներում, արիւնախում ԴԱԵՇի, Չեքիեթ Էլ-Նուսրայի և թրքական հետախուզութեան գործակալների կողմից:

 **Համո Մոսկոֆյան, Բեյրութ, 4 Դեկտեմբեր 2015**

Անցած տարի, Սիրիա և Լիբանան կատարած այցի օրերին, Հ.Հ. Ազգային Ժողովի պատգամաւորները հանդիպումներ ունեցան երկու երկրների ղեկավար անձանց, հայ կուսակցութիւնների և կազմակերպութիւնների առաջորդների, Լաթաքիա և այլ վայրեր ապաստանած քեսաբցիների հետ՝ առաջարկելով Մայր Հայրենիքի օգնութիւնը: Շնորհակալութեամբ ընդունելով ներգաղթի ու մարդասիրական օգնութեան հրաւերներն ու քայլերը, «աւանդական» կուսակցութիւնների ներկայացուցիչները զգուշացրեցին ռազմական միջամտութեամբ Քեսաբը ազատագրելու փորձերը, վախենալով թէ կարող են ինքնասպանական գործողութիւններ տեղի ունենան Մերձաւոր Արևելքի հայկական համայնքներում, արիւնախում ԴԱԵՇի, Չեքիեթ Էլ-Նուսրայի և թրքական հետախուզութեան գործակալների կողմից:

Այս բոլորը սակայն, չգոհացրեց Սփիւռքի և Մայր Հայրենիքի, քեսաբահայութեան որոշ տարրերին, որոնք ցանկանում էին վրէժխնդիր լինել հայկական Կիլիկիայի վերջին աւանի ռմբակոծման, ալան-թալանի և տեղահանութեան համար, թուրքմեն, չէչեն, գնչու և այլ վայրագ ցեղերի աւազակների կողմից: Մինչ այդ՝ Բեյրութում, Դամասկոսում, Եգիպտոսում յայտնուած «Հայ Իրաւաբանական Խորհուրդ»ը, իբր թէ Սիրիայի կազմից Թուրքիային դատի տալու և այլ պատճառաբանութիւններով, այցելեց և հանդիպումներ ունեցաւ հայկական Սփիւռքի թէ արաբական երկրների մի շարք ղեկավարների հետ, իրենց կազմում ունենալով Վահէ Մանջիկյանին (Դամասկոս) և Սիլվա Կերչեկեանին (Բեյրութ): Նրանց միջոցով է որ Սիրիական բանակի հետախուզութիւնը և Լիբանանեան «Հոգբոլլա»ն կազմեցին «Հայոց Վահան» («Ալ Տորի ալ-Արմանի») ռազմական ջոկատը, երկու տասնյակ հայ երիտասարդներից, որոնք վերաոյիշեալ ուժերի, Ալեքսանտրեթի «Սանճագ»ի ալևիների հայազգի ռազմա-քաղաքական ղեկավար Միհրան Ուրալի առաջնորդութեամբ՝ մասնակցեցին հայկական Քեսաբի ազատագրութեան:

Այդ առիթով, Հայաստանից, ազատ կամքով, Լիբանանով Սիրիա անցան հայրենասեր, «ցեղակրօն» մի քանի երիտասարդներ, իսկ Իսպանիա-Մադրիդից, բազմաթիւ ծեծծեքումներից յետոյ՝ Արթուր

հանդեպ, «Չագոննի» քրեական աշխարհի չայտարարուած և անվերջանալի պատերազմը ևս միլիոնաւոր փողեր է խոստանում իբր թէ արհեստավարժ մարդասպաններին, Ռուսաստանի թէ ԱՄՆ-ի ծագումով բազմազգ օլիգարխների կողմից: Այնպէս որ նրանց համար հեշտ է մոլորեցնել ազգային հերոս դառնալու մարմաջ ունեցող Արթուր Վարդանեանի նմաններին, որոնց արկածախնայողութիւնը հանգեցրեցին այսպիսի ողբերգութեան, պատճառ դառնալով մեղաւոր թէ անմեղ մարդկանց ձերբակալման, խայտառակութեան, Մերձաւոր Արևելքում թէ Կովկասում տիրող այս ճգնաժամային օրերին:

